ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 20.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/21

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2018թ. թիվ 03/26-3/2032-18 գրությամբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.02.2018թ. թիվ ԴՎԱ/378 գրության հիման վրա, 07.02.2018թ. թիվ 03/26-3/2032-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է Ֆ/Ա Իշխան Միրզոյանին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>Ֆ/Ա Իշխան Միրզոյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ֆ/Ա Իշխան Միրզոյանը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 12.02.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

Ֆ/Ա Իշխան Միրզոյանը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.01.2018թ. թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 8-րդ չափաբաժնով /սխտոր, գլուխ (սխտոր/) ճանաչվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Մասնակիցը 18.01.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է՝ ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

23.01.2018թ. Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից, իր էլեկտրոնային փոստից՝ ishxan.mirzoyan@mail.ru, հրավերում նշված պատվիրատուի պաշտոնական փոստին՝ g.vardanyan@mil.am, հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) և կարգով ուղարկել է Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (որպես ապացույց ներկայացվել է նամակը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային էջի քաղվածքը (screenshot), ուղարկված որակավորման փաստաթղթերը և Ֆ/Ա Իշխան Միրզոյանը պատրաստ է նաև նիստի ժամանակ բացել իր էլեկտրոնային փոստը և ցույց տալ ուղարկված նամակը):

Սակայն անհասկանալի պատճառներով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2018թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացվել է որոշում, որ իբրև թե Ֆ/Ա Իշխան Միրզոյանի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը գնումների համակարգողի էլ. փոստին չի ուղարկվել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետը:

Նշված փաստը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը հրավերով սահմանված ժամկետում և կարգով Պատվիրատուի էլ. փոստին ուղարկել է Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և դրանով կատարել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները:

Մասնակիցը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից՝ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը գտնում է, որ իր կողմից թույլ չի տրվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի որևէ խախտում, ուստի Մասնակիցը Խորհրդին խնդրել է իրեն չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ֆ/Ա Իշխան Միրզոյանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.02.2018թ. ժամը 12:20-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.02.2018թ. թիվ ԴՎԱ/378 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստից հետո Ֆ/Ա Իշխան Միրզոյանին ծանուցվել է ներկայացնելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթերը չեն ներկայացվել:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է Ընթացակարգի 8-րդ չափաբաժինների մասով մերժել Ֆ/Ա Իշխան Միրզոյանի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.02.2018թ. ժամը 12:20-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/21 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/21 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար համեմունքների, թեյի և սխտորի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ֆ/Ա Իշխան Միրզոյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով, որին սահմանված կարգով 18.01.2018թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով կայացված որոշմամբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնումները համակարգողի էլ. փոստին չեն ուղարկվել:

4. Ֆ/Ա Իշխան Միրզոյանը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է Մասնակցի «ishxan.mirzoyan@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի

քաղվածքը, համաձայն որի Մասնակիցը 23.01.2018թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի քարտուղարի «g.vardanyan@mil.ru» էլեկտրոնային փոստին ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2018թ. թիվ 03/26-3/2032-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.02.2018թ. թիվ ԴՎԱ/378 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար համեմունքների, թեյի և սխտորի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ֆ/Ա Իշխան Միրզոյանը:

Մասնակիցը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով, որին սահմանված ***18.01.2018թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով կայացված որոշմամբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնումները համակարգողի էլ. փոստին չեն ուղարկվել:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ ***Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է Ֆ/Ա Իշխան Միրզոյանի «ishxan.mirzoyan@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, որի համաձայն նշված փոստից 23.01.2018թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «g.vardanyan@mil.ru» էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել են համապատասխան փաստաթղթերը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդը գտնում է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով կատարել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովին ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այսպիսով Խորհուրդը գտնում է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չեն խախտվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ուստի Մասնակցին սույն հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2018թ. թիվ 03/26-3/2032-18 գրությամբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**